ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի հոկտեմբերի 29-ին: Նիստին մասնակցել են մասնախմբի բոլոր 6 անդամները: Մասնակցողների անուն, ազգանուն՝

1. Լիլիթ Սեյրանյան
2. Արուսյակ Թահիրյան
3. Գեղեցիկ Եսայան
4. Մարետա Էյվազյան
5. Նաիրա Փիրումյան
6. Վիոլետա Հովհաննիսյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Նիստի օրակարգի ներկայացում և հաստատում (Լ. Սեյրանյան):
2. Նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի քննարկում (Լ. Սեյրանյան):
3. Նոր ընդունված հատուկ մանկավարժի ներկայացում մասնախմբին և աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկում (Լ. Սեյրանյան):
4. Մասնագետների անհատական պարապմունքների դասալսումների կազմակերպում և ժամանակացույցի համաձայնեցում (Լ. Սեյրանյան, մասնախմբի մասնագետներ):
5. ԱՈՒՊ-ների առաջին երկամսյա քննարկումների նախապատրաստում և սովորողների առաջընթացի վերաբերյալ տվյալների հավաքագրման ընթացք (մասնախմբի մասնագետներ):
6. Ուսուցիչների, մանկավարժ-դաստիարակների և ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ խորհրդատվական աշխատանքի ընթացքի քննարկում (Լ. Սեյրանյան, մասնախմբի մասնագետներ):
7. «Հատուկ մանկավարժական մեթոդների և աջակցության ռազմավարությունների կիրառումը դաստիարակի աշխատանքում» թեմայով անցկացված վերապատրաստման արդյունքների քննարկում (Լ. Սեյրանյան):

ԼՍԵՑԻՆ 1.

Լ. Սեյրանյանը ներկայացրեց նիստի օրակարգի նախագիծը՝ կազմված մասնախմբի տարեկան աշխատանքային պլանի, նախորդ նիստում ընդունված որոշումների և ընթացիկ աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունից բխող հարցերի հիման վրա:

ԼՍԵՑԻՆ 2.

Լ. Սեյրանյանը ներկայացրեց 2026 թվականի սեպտեմբերի 30-ի նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքը:

Նշվեց, որ տարեսկզբյան դիտարկումների արդյունքները հիմք են ընդունվել սովորողների մասնագիտական աջակցության առաջնահերթությունների և հիմնական ուղղությունների հստակեցման համար: Լրացուցիչ դիտարկման կարիք ունեցող սովորողների դիտարկումները շարունակվել են ըստ անհրաժեշտության:

Անհատական ծառայությունների տրամադրման կարգացուցակները վերջնականացվել են՝ հաշվի առնելով սովորողների աջակցության կարիքները, ծառայությունների անհրաժեշտ հաճախականությունը, դասացուցակը և մասնագետների ծանրաբեռնվածությունը, և աշխատանքները կազմակերպվում են դրանց համապատասխան:

ԱՈՒՊ-ներով սահմանված տարեկան և կարճաժամկետ նպատակների իրականացման շրջանակում մասնագետները շարունակել են սովորողների առաջընթացի դիտարկումն ու արձանագրումը: Հավաքագրված տվյալները հիմք են հանդիսանալու առաջին երկամսյա քննարկումների ընթացքում

նպատակների իրականացման ընթացքը և կիրառվող աջակցության արդյունավետությունը գնահատելու համար:

Նշվեց նաև, որ շարունակվել են ուսուցիչների, մանկավարժ-դաստիարակների և ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ խորհրդատվությունները՝ սովորողների ուսումնառությանը մասնակցությունը, հաղորդակցումը և ինքնուրույնությունը խթանող աջակցության միջոցների փոխհամաձայնեցված կիրառումն ապահովելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ 3.

Լ. Սեյրանյանը մասնախմբին ներկայացրեց նոր ընդունված հատուկ մանկավարժ Վիոլետա Հովհաննիսյանին: Անդրադարձ կատարվեց նրա մասնագիտական գործառույթներին, թիմի մյուս անդամների հետ համագործակցության կազմակերպմանը և իրեն ամրագրվող սովորողների աջակցության գործընթացում ներգրավմանը:

Քննարկվեց նաև մասնագետի անհատական պարապմունքների կարգացուցակի ձևավորման և համապատասխան սովորողների ԱՈՒՊ-ներով նախատեսված նպատակներին ու աջակցության ուղղություններին ծանոթանալու հարցը:

ԼՍԵՑԻՆ 4.

Լ. Սեյրանյանը ներկայացրեց մասնագետների անհատական պարապմունքների դասալսումների կազմակերպման առաջարկվող ժամանակացույցը՝ համաձայն աղյուսակ 1-ի: Քննարկվեցին դասալսումների օրերն ու ժամերը, դիտարկման հիմնական ուղղությունները և դրանց համապատասխանությունը մասնագետների գործող կարգացուցակներին:

Նշվեց, որ դասալսումների ընթացքում հիմնական ուշադրությունը կդարձվի կիրառվող մասնագիտական մեթոդների և աջակցության միջոցների արդյունավետությանը, սովորողների ակտիվ մասնակցությանը, ինքնուրույն գործողությունների և հաղորդակցական նախաձեռնությունների խթանմանը: Դիտարկումների արդյունքները հիմք կհանդիսանան մասնագետներին նպատակային մեթոդական հետադարձ կապ տրամադրելու համար:

Աղյուսակով 1

Հ/հ	Մասնագետ	Ամսաթիվ	Ուղղություն	Սովորող / ձևաչափ	Ժամ
1.	Նաիրա Փիրումյան	09.11.2026	Հեքիաթաթերապիա	Խմբային աշխատանք	11^{55}–12^{25}
2.	Արուսյակ Թաիրյան	06.11.2026	Հատուկ մանկավարժ	Արամ Սիմոնյան	13^{50}–14^{30}
3.	Գեղեցիկ Եսայան	06.11.2026	Հոգեբան	Միքայել Խաչատյան	11^{20}–11^{50}
4.	Մարետա Էյվազյան	16.11.2026	Էրգոթերապիա	Գառնիկ Հայրապետյան	12^{30}–13^{00}

ԼՍԵՑԻՆ 5.

Քննարկվեց ԱՈՒՊ-ների առաջին երկամսյա քննարկումների նախապատրաստման ընթացքը: Մասնագետները ներկայացրին կարճաժամկետ նպատակների իրականացման վերաբերյալ մինչ այդ հավաքագրված դիտարկումները և առաջընթացի արձանագրման մոտեցումները:

Կարևորվեց սովորողի ընթացիկ կատարողականի համադրումը ելակետային տվյալների հետ՝ հստակեցնելով, թե որ գործողություններն է սովորողն արդեն կատարում ինքնուրույն, որ դեպքերում է դեռ աջակցության կարիք ունենում և ինչպիսի փոփոխություններ են արձանագրվել սահմանված նպատակների ուղղությամբ: Նշվեց, որ տվյալները պետք է ամփոփվեն մինչև երկամսյա համատեղ քննարկումները և հիմք հանդիսանան ԱՈՒՊ-ով նախատեսված նպատակների ու աջակցության միջոցների արդյունավետությունը գնահատելու համար:

ԼՍԵՑԻՆ 6.

Լ. Սեյրանյանը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ուսուցիչների, մանկավարժ-դաստիարակների և ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ իրականացված խորհրդատվական աշխատանքի ընթացքը:

Քննարկվեց մասնագետների կողմից առաջարկվող տեսողական հուշումների, հաղորդակցման միջոցների և այլ աջակցության քայլերի հնարավորինս միասնական կիրառումը դասարանում, անհատական պարապմունքների ընթացքում և տանը: Կարևորվեց ստացված հետադարձ կապի օգտագործումը կիրառվող մոտեցումների արդյունավետությունը գնահատելու և անհրաժեշտության դեպքում դրանք ճշգրտելու համար:

ԼՍԵՑԻՆ 7.

Լ. Սեյրանյանը ներկայացրեց հատուկ մանկավարժ Արուսյակ Թահիրյանի կողմից անցկացված «Հատուկ մանկավարժական մեթոդների և աջակցության ռազմավարությունների կիրառումը դաստիարակի աշխատանքում» թեմայով վերապատրաստման արդյունքները: Նշվեց, որ վերապատրաստումն իրականացվել է 2026–2027 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբերյան բաժնով նախատեսված աշխատանքների շրջանակում:

Անդրադարձ կատարվեց ներկայացված հատուկ մանկավարժական մեթոդների և աջակցության ռազմավարությունների՝ մանկավարժ-դաստիարակների առօրյա աշխատանքում կիրառման հնարավորություններին: Կարևորվեց դրանց ընտրությունը և կիրառումը սովորողների անհատական կրթական կարիքներին ու հնարավորություններին համապատասխան:

Լսելով օրակարգային հարցերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը և քննարկելով առաջադրված հարցերը՝ մասնախումբը որոշում է՝

1. Հաստատել մասնախմբի նիստի՝ 7 հարցից բաղկացած օրակարգը:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն և շարունակել ընթացիկ աշխատանքները սահմանված ուղղություններով: ԱՈՒՊ-ների նպատակների իրականացման, խորհրդատվական աշխատանքի և կիրառվող աջակցության միջոցների արդյունավետության վերաբերյալ արդյունքները քննարկել համապատասխան հաջորդ օրակարգային հարցերի շրջանակում:
3. Նոր ընդունված հատուկ մանկավարժ Վիոլետա Հովհաննիսյանին ծանոթացնել իրեն ամրագրվող սովորողների կրթական կարիքներին, ԱՈՒՊ-ներով սահմանված նպատակներին և մասնախմբում կիրառվող աշխատանքային մոտեցումներին: Մասնագետի անհատական պարապմունքների կարգացուցակը համաձայնեցնել սովորողների կարիքների, դասացուցակի և մասնագետի ծանրաբեռնվածության համադրմամբ:
4. Հավանություն տալ մասնագետների անհատական պարապմունքների դասալսումների ներկայացված ժամանակացույցին և դասալսումներն իրականացնել համաձայնեցված օրերին ու ժամերին: Դիտարկումների արդյունքների հիման վրա մասնագետներին տրամադրել համապատասխան մեթոդական հետադարձ կապ:
5. ԱՈՒՊ-ների առաջին երկամսյա քննարկումների կազմակերպման նպատակով՝
   5.1. մինչև համապատասխան քննարկումը հավաքագրել և ամփոփել յուրաքանչյուր սովորողի առաջընթացի վերաբերյալ տվյալները՝ դրանք համադրելով ելակետային կարողությունների և ԱՈՒՊ-ով սահմանված կարճաժամկետ նպատակների հետ,
   5.2. նոյեմբերի 2–13-ը կազմակերպել երկամսյա համատեղ քննարկումները՝ ապահովելով համապատասխան ուսուցիչների, մասնագետների և ծնողների/օրինական ներկայացուցիչների մասնակցությունը,
   5.3. քննարկումների արդյունքներով լրացնել համապատասխան փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ ԱՈՒՊ-ի նպատակների, դրանց իրականացման եղանակների կամ աջակցության միջոցների ճշգրտման վերաբերյալ:
6. Շարունակել ուսուցիչների, մանկավարժ-դաստիարակների և ծնողների/օրինական ներկայացուցիչների հետ խորհրդատվական աշխատանքը՝ համաձայնեցնելով սովորողի տարբեր միջավայրերում կիրառվող աջակցության քայլերը: Ստացված հետադարձ կապն օգտագործել կիրառվող մոտեցումների արդյունավետությունը գնահատելու և անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու համար:
7. Մանկավարժ-դաստիարակներին տրամադրել շարունակական մեթոդական աջակցություն՝ վերապատրաստման ընթացքում ներկայացված հատուկ մանկավարժական մեթոդներն ու

աջակցության ռազմավարությունները սովորողների անհատական կարիքներին համապատասխան կիրառելու նպատակով: